

«ԱՈՒԴԻՏ ՊՐՈ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԻԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	<u>31.12.2025թ.</u> հազար դրամ	<u>31.12.2024թ.</u> հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	897	889
Ոչ նյութական ակտիվներ	5	1785	1 985
Հետաձգված հարկային ակտիվներ	6	486	117
		3 168	2 991
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	941	301
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	2 535	60
		3 476	361
		6 644	3 352
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		500	500
Կուտակված շահույթ (վնաս)		41	(1 548)
		541	(1 048)
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված փոխառություններ	16.2	-	1 650
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	3 094	2 077
Այլ պարտավորություններ	10	2 697	651
Շահութահարկի գծով պարտավորություն	14	312	22
		6 103	4 400
		6 644	3 352

**ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«ԱՌԻԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծնթ.	2025թ. հազար դրամ	2024թ. հազար դրամ
Հասույթ	11	38 420	8 808
Վաճառքի հնքնարժեք	12	(29 301)	(7 874)
Համախառն շահույթ		9 119	934
Վարչական ծախսեր	13	(7 543)	(4 891)
Իրացման ծախսեր		(268)	-
Այլ եկամուտներ/ծախսեր		44	2 823
Գործառնական այլ ծախսեր		(6)	(9)
Շահույթ մինչև հարկումը		1 546	(1 143)
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)	14	43	95
Տարվա զուտ շահույթ		1 589	(1 048)
Այլ համապարփակ եկամուտներ		-	-
Տարվա համապարփակ արդյունք		1 589	(1 048)
Զբաղիված շահույթ (չծածկված վնաս) տարվա սկզբի դրությամբ		(1 548)	(500)
Շահաբաժին		-	-
Զբաղիված շահույթ տարվա վերջի դրությամբ		41	(1 548)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության
ղեկավարության կողմից 2026թ. մարտի 3-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից
ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արսեն Խաչատրյան
Տնօրեն



Անուշ Մարտիրոսյան
Գլխավոր հաշվապահ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
	հազար դրամ	հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից մուտքեր	45 716	11 410
Գնումների դիմաց վճարումներ	(7 529)	(4 767)
Վճարումներ աշխատակիցներին	(19 123)	(5 883)
Վճարումներ այլ հարկերի գծով	(13 587)	(2 991)
Շնորհներից և անհատույց ստացումներից մուտքեր	44	2 807
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր/ելքեր	(18)	(143)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	5 503	433
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռք բերման գծով վճարումներ	(1 379)	(1 022)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	-	(1 000)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1 379)	(2 022)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառությունների տրամադրում/(մարում), զուտ	(1 650)	1 650
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1 650)	1 650
Դրամական միջոցների զուտ հոսքեր	2 474	61
Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ	61	-
Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ	2 535	61

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԻԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2024թ.	500	(500)	-
Շահաբաժիններ	-	-	-
Տարվա շահույթ/վնաս	-	(1 048)	(1 048)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	500	(1 548)	(1 048)
Շահաբաժիններ	-	-	-
Տարվա շահույթ/վնաս	-	1 589	1 589
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2025թ.	500	41	541

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՌԻԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

1. Ընդհանուր տեղեկատվություն

«ԱՌԻԴԻՏ ՊՐՈ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2011թ. դեկտեմբեր ամսին:

Ընկերության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Եղբայրության 8/16, գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացի 26 ա:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը տարեվերջին կազմել է 6 անձ:

Ընկերության հիմնական գործունեությունն է աուդիտի և աուդիտին հարակից ծառայությունների, ինչպես նաև հաշվապահական, հարկային և ֆինանսական խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

2021թ. հունվարի 1-ից աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտական կառույցի՝ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների, ռեեստրում: Ընկերությունը ռեեստրում գրանցվել է 2024 թվականի հուլիսի 18-ի, ՀԳԳՀ՝ 1 24 0894:

Հաշվետվության ներկայացման ամսաթվի դրությամբ Ընկերության մասնակիցներն են.

- | | |
|---|----------------------|
| • Արսեն Խաչատրյան, տնօրեն, որակավորված աուդիտոր | -75% մասնակցություն, |
| • Ավետ Ավետիսյան, որակավորված աուդիտոր | -10% մասնակցություն, |
| • Անուշ Մարտիրոսյան | -10% մասնակցություն, |
| • Զարինե Վերդիյան | -5% մասնակցություն, |

2. Պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանությունը ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն:

(բ) Անընդհատության հիմունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

(գ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

(դ) Չափման և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

(ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Սույն ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և դրանց համար հիմք հանդիսացող ենթադրությունները կանոնավոր կերպով վերանայվում են:

Հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունը ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա,

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ծանոթագրություն 3(ա)-ից 3(ժգ) կետերում ներկայացված հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման այս քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

(ա) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների հողվածները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստը:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին հողվածներ (նշանակալի բաղադրիչ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների հողվածի բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են հողվածի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական

օգուտները կհոսեն դեպի Ընկերություն և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարելուն պես:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մաշվածության ծախսումները ներառվում են այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ հիմնական միջոցը մատչելի է օգտագործման համար: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ ժամանակաշրջանի համար հետևյալն են.

Համակարգչային տեխնիկա	1-3 տարի
Արտադրատնտեսական գույք	1-8 տարի
Ոչ նյութական ակտիվ	10 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(բ) Ոչ նյութական ակտիվներ

(i) Ճանաչում և չափում

Ընկերության կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

(ii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

(գ) Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական վարձակալությամբ ձեռքբերված ակտիվները չափվում են իրական արժեքից և նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքից նվազագույնով: Սկզբնական ճանաչումից հետո ակտիվը հաշվառվում է տվյալ ակտիվի հանդեպ կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Ֆինանսական վարձակալություն չհանդիսացող վարձակալությունը գործառնական վարձակալություն է:

Գործառնական վարձակալության դեպքում վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ընկերության վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարձակալության հետ կապված ծախսերը,

ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

(դ) Պաշարներ

Ծառայությունների գծով պաշարները ներառում են ծառայության ծախսումները, որոնց գծով կազմակերպությունը դեռևս չի ճանաչել համապատասխան հասույթը, ինչպես նաև նյութերը, որոնք պահվում են ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Ընկերությունը պաշարները չափում է ինքնարժեքով: Ծառայությունների ինքնարժեքը հաշվարկվում է փաստացի կատարված արտադրական ծախսումների հանրագումարով (փաստացի ինքնարժեք):

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է՝ արդյոք պաշարներն արժեզրկված են, թե՛ ոչ: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբ) արժեզրկված է, Ընկերությունը նվազեցնում է պաշարի (կամ խմբի) հաշվեկշռային արժեքը՝ այն հասցնելով դրա վաճառքի գնին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները: Այդ նվազումը արժեզրկումից կորուստն է և անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Վաճառված կամ այլ ձևով հատուցման դիմաց օտարված պաշարների հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս ժամանակաշրջանում, երբ առաջացել է կորուստը:

(ե) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Ընկերությունը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

(զ) Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

(ե) Արտարժույթով գործառնություններ

Ընկերությունը արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Գործառնության ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ գործառնությունն առաջին անգամ որակվում է որպես ճանաչման ենթակա՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը.

ա) վերահաշվարկում է արտարժույթով դրամային հոդվածները կիրառելով փակման փոխարժեքը,

բ) ներկայացնում է սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:

Ընկերությունը փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

(ը) Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Ընկերությունը փոխառությունը և դեբիտորական պարտքը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է միայն այն դեպքում, երբ դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ ստանալու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը փոխառությունը և դեբիտորական պարտքը չափում է

տվյալ փոխառության կամ դեբիտորական պարտքի իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են տվյալ փոխառության կամ դեբիտորական պարտքի տրամադրմանը կամ առաջացմանը:

Անտոկոս կամ ցածր տոկոսով փոխառության և դեբիտորական պարտքի իրական արժեքը որոշվում է այդ փոխառության և դեբիտորական պարտքի գծով ապագայում ստացվելիք դրամական միջոցների՝ շուկայական տոկոսադրույքով զեղչված արժեքով:

Կարճաժամկետ անտոկոս դեբիտորական պարտքի իրական արժեքը համապատասխան հաշիվ-ապրանքագրի (կամ նմանատիպ այլ փաստաթղթի) համաձայն ստացման ենթակա միջոցների չզեղչված գումարն է:

Կարճաժամկետ անտոկոս փոխառության իրական արժեքը փոխառության անվանական արժեքն է: Նման դեպքում ստացման ենթակա դրամական միջոցների զեղչում չի իրականացվում:

Անտոկոս փոխառության իրական արժեքը, որի մարումը Ընկերությունը կարող է ցանկացած պահի պահանջել, հանդիսանում է փոխառության անվանական արժեքը: Նման դեպքում ստացման ենթակա դրամական միջոցների զեղչում չի իրականացվում:

Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կարճաժամկետ անտոկոս դեբիտորական պարտքերը և փոխառությունները սկզբնական ճանաչումից հետո չափվում են այն արժեքով, որով նրանք չափվել էին սկզբնական ճանաչման պահին:

Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորուստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(թ) Կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ

Ընկերությունը կրեդիտորական պարտքը և ստացված փոխառությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է միայն այն դեպքում, երբ դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ վճարելու իրավական պարտավորություն:

Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կրեդիտորական պարտքը և ստացված փոխառությունը չափում է տվյալ կրեդիտորական պարտքի կամ ստացված փոխառության իրական արժեքով, գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են տվյալ կրեդիտորական պարտքի կամ փոխառության առաջացմանը կամ ստացմանը:

Անտոկոս կամ ցածր տոկոսով կրեդիտորական պարտքի և ստացված փոխառության իրական արժեքը որոշվում է այդ կրեդիտորական պարտքի և ստացված փոխառության գծով ապագայում վճարվելիք դրամական միջոցների՝ շուկայական տոկոսադրույքով զեղչված արժեքով:

Կարճաժամկետ անտոկոս կրեդիտորական պարտքի իրական արժեքը համապատասխան հաշիվ-ապրանքագրի (կամ նմանատիպ այլ փաստաթղթի) համաձայն ստացման ենթակա դրամական միջոցների չզեղչված գումարն է:

Կարճաժամկետ անտոկոս ստացված փոխառության իրական արժեքը փոխառության անվանական արժեքն է: Նման դեպքում վճարման ենթակա դրամական միջոցների զեղչում չի իրականացվում:

Անտոկոս ստացված փոխառության իրական արժեքը, որի մարումը Ընկերությունից ցանկացած պահի կարող է պահանջվել, հանդիսանում է փոխառության անվանական արժեքը: Նման դեպքում վճարման ենթակա դրամական միջոցների զեղչում չի իրականացվում:

Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը կրեդիտորական պարտքերը և ստացված

փոխառությունները չափում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կարճաժամկետ անտոկոս կրեդիտորական պարտքերը և ստացված փոխառությունները սկզբնական ճանաչումից հետո չափվում են այն արժեքով, որով նրանք չափվել էին սկզբնական ճանաչման պահին:

(ժ) Սխալներ

Որքանով իրագործելի է, Ընկերությունը որևէ նախորդ ժամանակաշրջանի էական սխալները ուղղում է հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որում տեղի է ունեցել համապատասխան սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը՝ ապա վերահաշվարկելով ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

(ժա) Հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի:

Ընկերությունը հասույթը չափում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Ընկերության հասույթը ձևավորվում է աուդիտորական, հաշվապահական և խորհրդատվական ծառայությունների մատուցումից:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- Հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- Հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- Հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը, և
- Հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Գործարքի ավարտվածության աստիճանը որոշվում է ներքոթվարկյալ մեթոդներից որևէ մեկով (կիրառվում է տվյալ դեպքի համար առավել տեղին մեթոդը)՝

- Կատարված աշխատանքների ուսումնասիրություն,
- Տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և մատուցվելիք ծառայությունների ամբողջ ծավալի հարաբերություն, կամ՝
- Տվյալ ամսաթվի դրությամբ կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների ծավալի հարաբերությունը:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել և հավանական է, որ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսումները չեն փոխհատուցվի, հասույթ չի ճանաչվում, իսկ կրած ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն

ժամանակաշրջանում, երբ դրանք կատարվել են:

(Ժբ) Վաճառքի ինքնարժեք

Ծառայությունների մատուցման ծախսումները ներառում են՝

- այն ծախսումները, որոնք ուղակիորեն վերաբերում են կոնկրետ մատուցված ծառայությանը,
- այն ծախսումները, որոնք վերագրվում են ընդհանուր ծառայությունների մատուցմանը և կարող են վերագրվել տվյալ ծառայությանը,
- այն ծախսումները, որոնք պայմանագրի պայմանների համաձայն, հատուկ գանձվում են պատվիրատուից:

Կոնկրետ մատուցված ծառայությանն ուղակիորեն վերաբերող ծախսումներն են ծառայության մատուցման աշխատանքներում ընդգրկված աշխատակիցներին հատուցումները և օգտագործվող հիմնական միջոցների մաշվածությունը:

Ծախսումները, որոնք չեն կարող վերագրվել պայմանագրի գործունեությանը կամ չեն կարող վերագրվել պայմանագրին, չեն ներառվում ծառայությունների մատուցման ծախսումների մեջ:

(Ժգ) Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը (հարկը) ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկ է:

Հետաձգված շահութահարկը (հարկը) ապագա ժամանակաշրջաններում վճարման կամ փոխհատուցման ենթակա հարկ է, որը սովորաբար Ընկերության կողմից իր ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ հաշվեկշռային արժեքով փոխհատուցելու կամ մարելու արդյունք է, ինչպես նաև տվյալ պահին չօգտագործված հարկային վնասները հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հարկային հետևանք:

Ընկերությունը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Ընկերությունը այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Ընկերությունը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

Ընկերությունը ընթացիկ հարկային պարտավորության կամ ընթացիկ հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:

Ընկերությունը ապագա ժամանակաշրջաններում՝ որպես անցյալ գործարքների կամ դեպքերի արդյունք, փոխհատուցվելիք կամ վճարվելիք հարկի համար ճանաչում է հետաձգված հարկային ակտիվ կամ հետաձգված հարկային պարտավորություն:

Ընկերությունը հետաձգված հարկային պարտավորության կամ հետաձգված հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:

Ընկերությունը ճանաչում է հետաձգված հարկային ակտիվների հետ կապված գնահատման պահուստ այնպես, որ զուտ հաշվեկշռային արժեքը հավասար լինի այն ամենաբարձր գումարին, որը ավելի շատ հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի ընթացիկ կամ ապագա հարկվող շահույթի հիման վրա:

4. Հիմնական միջոցներ

	<i>Հազար դրամ</i>		
	Համակարգչային տեխնիկա	Այլ գույք	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
Առ 01 հունվարի 2024թ.	-	-	-
Ավելացումներ	636	353	989
Դուրս գրում	-	36	36
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	636	317	953
Առ 01 հունվարի 2025թ.	636	317	953
Ավելացումներ	1 284	65	1 349
Դուրս գրում	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	1 920	382	2 302
<i>Մաշվածություն</i>			
Առ 01 հունվարի 2024թ.	-	-	-
Տարվա ծախս	(61)	3	64
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	61	3	64
Առ 01 հունվարի 2025թ.	61	3	64
Տարվա ծախս	1 285	56	1 341
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	1 346	59	1 405
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	575	314	889
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	574	323	897

5. Ոչ նյութական ակտիվներ

	Այլ	Հազար դրամ Ընդամենը
Սկզբնական արժեք (ինքնարժեք)		
31 դեկտեմբերի 2024թ.	2 000	2 000
Ավելացումներ	-	-
Դուրս գրում	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	2 000	2 000
Կուտակված ամորտիզացիա		
31 դեկտեմբերի 2024թ.	15	15
Տարեկան ամորտիզացիա	200	200
Դուրս գրում	-	-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	215	215
Հաշվեկշռային արժեք		
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	1 985	1 985
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	1 785	1 785

Կազմակերպությանը պատկանող վեբ կայքը հաշվառվում է որպես ոչ նյութական ակտիվ՝ 2,000,000 ՀՀ դրամ սկզբնական արժեքով: Օգտակար ծառայության ժամկետը գնահատված է 10 տարի: Ամորտիզացիայի գումարը ներառվում է Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Իրացման ծախսեր» հոդվածում:

6. Հետաձգված հարկային (պարտավորություն)/ակտիվ

Հաշվետու տարվա հետաձգված հարկը հաշվարկվել է կիրառելով 18% դրույքը (2024թ.՝ 18%):

Հետաձգված հարկային պարտավորությունների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

	<i>Հազար դրամ</i>		
	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Հաշվեգրված/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արձակուրդային վճարների պահուստ	117	(368)	486
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	117	(368)	486
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	117	(368)	486
	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Հաշվեգրված/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արձակուրդային վճարների պահուստ	-	(117)	117
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	-	(117)	117
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	-	(117)	117

7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*Հազար դրամ*

	<u>31.12.2025թ.</u>	<u>31.12.2024թ.</u>
Մատուցված ծառայությունների դիմաց	880	240
Կանխավճար գնումների գծով	60	60
Հարկերի գծով	1	1
	<u>941</u>	<u>301</u>

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*Հազար դրամ*

	<u>31.12.2025թ.</u>	<u>31.12.2024թ.</u>
Ընթացիկ հաշիվներ բանկում ՀՀ դրամով	2 535	60
	<u>2 535</u>	<u>60</u>

9. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*Հազար դրամ*

	<u>31.12.2024թ.</u>	<u>31.12.2023թ.</u>
Գնումների գծով	374	360
Ստացված կանխավճարներ	1 500	1 080
Հարկերի և պարտադիր վճարների գծով, բացի շահութահարկը	1 220	637
	<u>3 094</u>	<u>2 077</u>

10. Այլ պարտավորություններ*Հազար դրամ*

	<u>31.12.2025թ.</u>	<u>31.12.2024թ.</u>
Պահուստ վաստակած արձակուրդայինների գծով	2 697	651
	<u>2 697</u>	<u>651</u>

11. Հասույթ

Հազար դրամ

	2025թ.	2024թ.
Աուդիտորական ծառայություններից	26 220	5 800
Հաշվապահական ծառայություններից	9 905	3 008
Խորհրդատվական ծառայություններից	1 280	-
Այլ ծառայություններից	1 015	-
	38 420	8 808

12. Ինքնարժեք

Հազար դրամ

	2025թ.	2024թ.
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	24 964	7 239
Մաշվածություն	574	1
Վարձակալություն	2 486	-
Այլ ծախսումներ	1 277	634
	29 301	7 874

13. Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2025թ.	2024թ.
Աշխատանքի վարձատրության գծով	3 353	1 517
Գործուղման և ներկայացուցչական	521	314
Վարձակալական վճարների գծով	1 065	1 776
Հեռահաղորդակցության ծախսեր	205	31
Մաշվածություն և ամորտիզացիա	968	77
Ոչ նյութական ակտիվների սպասարկման	395	376
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	439	197
Բանկային ծախսեր	18	13
Այլ ծախսեր	579	590
	7 543	4 891

14. Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)

	Հազար դրամ	
	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	(325)	(22)
Հետաձգված հարկի ծախս (եկամուտ)	368	117
	43	95

Շահութահարկի գծով պարտավորություն/(կանխավճար)

	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	22	-
Վճարում	(35)	-
Տարվա ընթացիկ ծախս	325	22
Տարեվերջի մնացորդ	312	22

15. Պայմանական դեպքեր և պարտավորվածություններ

(ա) Դատական վեճեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ներգրավված չէ դատական գործերում և հայցերում:

(բ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների առարկա են:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները:

16. Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերության կապակցված կողմերն են հիմնական ղեկավար անձնակազմը, բաժնետերերը:

16.1 Վերահսկողություն

Ընկերության բաժնեմասերի 75%-ը պատկանում է Արսեն Խաչատրյանին, որը նաև հանդիսանում է ընկերության առանցքային կառավարչական անձնակազմի անդամ:

16.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

Ընկերության ղեկավարությունը ստացել է հետևյալ հատուցումները.

	<i>Հազար դրամ</i>	
	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	<u>14,639</u>	<u>5,273</u>
Վարձակալություն	<u>600</u>	<u>250</u>
	<u>15,239</u>	<u>5,523</u>

Կապակցված կողմերի հետ փոխառությունների գծով գործարքները ներկայացված են ստորև.

	<i>Հազար դրամ</i>			
	<u>մնացորդ 31.12.2024թ</u>	<u>2025թ. ստացված</u>	<u>2025թ. մարված</u>	<u>մնացորդ 31.12.2025թ.</u>
Ստացված փոխառություն	<u>1,650</u>	<u>8,840</u>	<u>(10,940)</u>	<u>-</u>
	<u>1,650</u>	<u>8,840</u>	<u>(10,940)</u>	<u>-</u>